Ձեր իրավունքները 1964 թ. Քաղաքացիական իրավունքների ակտի Գլուխ VI-ի ներքո

1964 թ. Քաղաքացիական իրավունքների ակտի Գլուխ **VI**-ը պահանջում է, որ Միացյալ Նահանգներում ոչ մի անձ ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման պատճառով չմերժվի, չզրկվի նպաստներից, կամ իր նկատմամբ խտրականություն չցուցաբերվի որևէ ծրագրում կամ գործողությունում, որը դաշնային ֆինանսական օգնություն է ստանում: Նախագահական գործադիր հրաման 12898-ը վերաբերվում է բնապահպանական արդարադատությանը փոքրամասնություն կազմող և ցածր եկամուտ ունեցող բնակչության խմբերում: Նախագահական գործադիր հրաման 13166-ը վերաբերվում է անգլերենի սահմանափակ հմտություն ունեցող անհատներին ուղղված ծառայություններին:

Ցանկացած ոք, ով հավատում է, որ իրեն մերժել են, զրկել են նպաստներից կամ իր նկատմամբ խտրականություն է դրսևորվել, կարող է գրավոր բողոք ներկայացնել **San Francisco Bay Area Rapid Transit District**-ին: Դաշնային և նահանգային օրենքը պահանջում է, որ բողոքները ներկայացվեն ենթադրվող միջադեպից հետո հարյուր ութսուն (180) օրացուցային օրվա ընթացքում:

Bart-ի խտրականության բացառման պարտականությունների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ Գլուխ **VI**-ի բողոք ներկայացնելու համար խնդրում ենք ուղարկել ձեր խնդրանքն այստեղ՝

San Francisco Bay Area Rapid Transit District (BART)
ATTN: Office of Civil Rights
2150 Webster St, Suite #0414
Oakland, CA 94612
(510) 874-7333 Ֆաքս **(510) 464-7587**
officeofcivilrights@bart.gov

Բողոքի ձևաթղթերը կարելի է ձեռք բերել նաև **BART**-ի **www.bart.gov/titlevi** կայքէջից:

Գլուխ VI-ն օրենք է

BART